# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՍԱԷ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | ՍԱԷ ՍՊԸ | ՍԱԷ | ՍԱԷ ՍՊԸ | ՍԱԷ ՍՊԸ | Կեպին մուգ կապույտ Midnight Navy (սև երանգին մոտ) #070a25 Color Palette գունի՝ ջերմություն պահող կտորից: Անհրաժեշտության դեպքում մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Բաղադրությունը՝ առավելագույնը 70% պոլիէսթեր, առնվազն 30% բուրդ, քաշը 1մ2 350 գ, ±3%: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Գլխարկահովհարի հաստությունը՝ 3մմ, իսկ երկարությունը կենտրոնական մասում 7 սմ, որի եզրագիծը սպիտակ կտորով մշակված։ Թասակը բաղկացած է հինգ կտորից։ Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն։ Թասակը միացված է գլխարկահովհարին 3սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար։ Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7մմ հեռավորությամբ։ Կեպին ներսի կողմից ունի տաք ներդիր, վզամասը և ականջները փակելու համար։ Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ։ Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը։ Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ ետևում 1X8սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ։ Ետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5սմ-ից ոչ պակաս։ Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնիքված նմուշ։ Ապրանքը ընդունվում է հաստատված նմուշի համաձայն։ Չափսերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ Արտաքին տեսքը` լուսանկարին համապատասխան։ Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 25 հատ, որը տեղադրվում է ստվարաթղթե արկղի մեջ, յուրաքանչյուր արկղի մեջ 100 հատ։ Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը։ Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО САЭ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 6 | | | | | |